



Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am



Ճնորհավոր Ամանոր և Սուրբ Ճնունը

Ոստիկանության կոլեգիայի անդամների անունից և անձամբ Ամանորի և Սուրբ Ճնունյան տոների առթիվ շնորհավորում եմ ոստիկանության ծառայողներին, նրանց ընտանիքներին, մեր վետերաններին, մեր համաբաղաբացիներին, բոլոր նրանց, ում հավատի ու նվիրումի շնորհիվ 2019 թվականը դարձավ նոր մտեցումների կենսագործման տարի:

Անընդհատ բայլ անել առաջ, անընդհատ կատարելագործվել, չհապաղել զարգացման ճանապարհին. սա պարզապես ոստիկանության բաղադրարկությունը չէ, հավատամք է, և անցնող տարին հավաստեց, որ իրագործելի է այդ հավատամքը:

Ոստիկանությունը միշտ և առավել եւս այսօր կոռուպցիայի, ապօրինության, անարդարության դեմ պայքարի առաջնագծում է և հաստատագրում է օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի գերակայությունը, հավատարմությունն իր կոչմանը, օրինականության հանդեպ բաղաբացու իրավունքն ու հավատը:

Այսօր ոստիկանության գործերը մարտական հերթապահություն են իրականացնում պետական սահմանին՝ հասարակության անդորրի պահպանումը զուգորդելով երկիրն արտաքին ոտնձգություններից պաշտպանելու սրբազան առաքելությանը:

Ոստիկանությունը գործունեության այլ ուղի ունենալ չի կարող, և վաղն էլ մեր գերխնդիրն է հասարակական կարգի պահպանումը, պայքարը հանցավորության դեմ, ոստիկանության ողջ համակարգի, հատկապես՝ հասարակությանը ծառայություն մատուցող ստորաբաժանումների աշխատանքի կատարելագործումը, հասարակության հետ կապի ամրապնդումը, նվիրյալ ծառայությունը պետությանն ու ժողովրդին:

Եվ այդ գործում հաջողության գրավակալը մեր հավատն է, միասնությունը, նվիրումը, մասնագիտական մակարդակի բարձրացումը, մարդկային որակների հաստատագրումը՝ որպես գործունեության առանցք:

Մեր հաջողության գրավակալը հասարակություն-ոստիկանություն կապի ու փոխմտասնության շարունակական ամրապնդումն է:

Ուրեմն, գալիք տարում էլ գործով հաստատեք, որ հավատարիմ եմք մեր կոչմանն ու առաքելությանը:

Կրկին շնորհավորում եմ առաջիկա տոների առթիվ, մաղթում արդյունավետ ծառայություն և անձնական ձեռքբերումներ: Երջանիկ եղեք:

Օպերատիվ խորհրդակցություն

Դեկտեմբերի 25-ին ոստիկանությունում տեղի ունեցավ օպերատիվ խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետի պաշտոնակատար Արման Սարգսյանը:

Արման Սարգսյանը խորհրդակցության մասնակիցների ուշադրու-

ակտիվացնել ինչպես բացահայտման, այնպես էլ հանցագործությունների կանխարգելման աշխատանքները: Ցուցում տրվեց իրականացնել միջոցառումներ՝ հայտնաբերելու և առգրավելու բնակչության մոտ պահվող ապօրինի զենք-



թյունը իրավիճակը վերջերս գրանցված սպանությունների, սպանության փորձերի, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի բացահայտումների ու կանխման ուղղությամբ ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումների վրա: Կարելի էր անչափահասների մոտ պահվող սառը զենքերի, տարբեր տեսակի սուր-կտրող-ծակող գործիքների հայտնաբերման և այդ ուղղությամբ ծնողների շրջանում ու ուսումնական հաստատություններում իրականացվող միջոցառումների պատշաճ անցկացումը: Մտահոգիչ հիմնախնդիր է նաև բնակչության մոտ պահվող ապօրինի զենք-զինամթերքի առկայությունը:

Ոստիկանության պետի պաշտոնակատարը տարածքային ստորաբաժանումներին հանձնարարեց

զինամթերքը, ձեռք բերել օպերատիվ տեղեկություններ, վերլուծել դրանք, և կատարել համապատասխան գործողություններ:

Արման Սարգսյանը խոսելով սրտացավ, բարեխիղճ ծառայության մասին՝ նշեց, որ ոստիկանը պետք է օրենքով նախատեսված բոլոր լիազորություններն օգտագործի հանցավոր տարրերին հայտնաբերելու և արդարադատության առաջ կանգնեցնելու համար: Իսկ եթե կլինեն իրենց կոչմանն ու առաքելությանը դավաճանող ծառայողներ՝ կենթարկվեն պատասխանատվության:

Խորհրդակցությանը ջննարկվեցին նաև կոնկրետ դեպքերով ոստիկանության գործողություններն ու տրվեցին համապատասխան ցուցումներ ու հանձնարարականներ:

Գերխնդիր՝ օրինապահ հասարակություն

Պատմություն է դառնում 2019 թվականը: Առջևում մեր անելիքներ են, հին տարուց ժառանգություն ստացած ծրագրեր, որ պարտավոր ենք կյանքի կոչել, կիսատ մնացած գործեր, որոնք ավարտին պետք է հասցվեն: Այսինքն, համարյա ամեն ինչ ճիշտ այնպես է, ինչպես ամեն տարեկանը:

Նոր տարին հիմնականում մույն խնդիրներն է առաջադրում հանրապետության ոստիկաններին՝ պայքար հանցավորության դեմ, հասարակական կարգի պահպանում, մարդու անվտանգությանն ու սեփականության պաշտպանությունն բոլոր տեսակի ոտնձգություններից: Ոստիկանի ծառայություն, որ հա-

մուն մարդու է, հանուն երկրի ներքին կայունության:

Տարեկիզբը միշտ ընթացք է հուշում, ինչպես որ տարեվերջը ավանդաբար ամփոփման և հանրագումարի հնարավորություն է: Հենց տարեկիզբին է, որ հաշվեկշռում ենք արվածն ու անելիքը և ծրագրելով հետագա քայլերը՝ միեւնույն ժամանակ գնահատում ենք մեր ուժերն ու կարողությունները: Նաև՝ իրավունքներն ու պարտականությունները: Այս արժեհամակարգում բոլոր բաղադրիչներն են կարելու, սակայն պարտադիր հաշվեկշռված պետք է լինեն, թերևս, իրավունքներն ու պարտականությունները:



Ապօրինություններ են բացահայտվել

Ոստիկանության Թալինի բաժնում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերով հիմնավորվել են Օթեան համայնքում կատարված ապօրինություններ: Պարզվել է, որ համայնքապետարանի որոշ պաշտոնատար անձինք կազմել են կեղծ փաստաթղթեր, որոնց հիման վրա համայնքի ղեկավարի կնոջը, առանց նրա գիտության, 2017 թ. ծեականերպել են որպես համայնքապետարանի վարչական շենքի մաքրուկի և աշխատավարձ են դուրս գրել: Ապօրինությունների հետևանքով 2017 թ. հունվարից 2019 թ. սեպտեմբեր համայնքապետի կնոջ բանկային քարտին փոխանցվել է 1 միլիոն 530 հազար դրամ:

Թալինի ոստիկանների հաջորդ բացահայտումը մարզի Թլիկ համայնքում է: Պարզվել է, որ Թլիկ համայնքի մշակույթի տան նախկին տնօրենը, որ պաշտոնավարել է 1999-2018 թթ., 2015 թ. պարբերաբար բացակայել է Հայաստանից, սակայն նրա անվանք աշխատավարձ է դուրս գրվել: Քրեական գործեր են հարուցվել:

17-ամյա երիտասարդը սպանել էր հասակակցին

Դեկտեմբերի 23-ին «շտապօգնության» խումբը պարանոցի և կրծքավանդակի կտրած-ծակած վերքերով հիվանդանոց էր տեղափոխել 17-ամյա մի երիտասարդի, որը ճանապարհին մահացել էր: Ոստիկանության Արարատի մարզային վարչությանն ու Մասիսի բաժնի քրեական հետախույզները վերլուծեցին սպանության հնարավոր շարժառիթները: Այս համատեքստում հիմնավոր տվյալներ ձեռք բերեցին, որ 17-ամյա մի երիտասարդի և սպանվածի միջև կենցաղային հարցերի շուրջ պարզաբանում էր եղել: Պայմանավորվել էին հանդիպել չշահագործվող գորգագործական արտադրամասում, որտեղ մարդկանց շարժ չկար: Վեճի ընթացքում էլ մեկը դանակով խփել էր մյուսի պարանոցին ու կրծքավանդակին և փախել: Փաստական տվյալների համադրմամբ քրեական հետախույզների կասկածները հաստատվեցին: Կասկածյալը բերման ենթարկվեց ոստիկանություն: Հարուցվել է քրեական գործ:



Սպանությունը բացահայտվեց

Դեկտեմբերի 18-ին հիվանդանոցից ոստիկանության էրեբունու բաժնում ահազանգ էր ստացվել, որ հիվանդանոց է տեղափոխվել տղամարդու դի: Հիվանդանոց մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ մահացածը երկաթուղայինների 4-րդ փողոցի 43-ամյա բնակիչ էր: Իրավապահները համատեղ աշխատանքով պարզեցին դեպքի վայրը: Երկաթուղայինների 2-րդ փողոցում հայտնաբերվեցին արմանման հետքեր, որտեղ տղամարդու վրա կրակվել էին: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ ձեռք բերվեցին հանցագործությունը կատարած անձի ինքնուրույն վերաբերյալ. սպանությունը բացահայտվեց: Նախաքննությունը շարունակվում է:



Գերխնդիրը՝ օրինապահ հասարակություն

Սկզբը՝ էջ 1

Ներքինիստ խոսք է՝ ամենադժվար պատվիրաններից «Մի դատիր»-ը կատարել է: Իրոք որ այդպես է, բան-գի ամենից հեշտ խախտվում է հենց իրավունքի եւ պարտականության հավասարակշռությունը: Մարդ արարածն իր բնությամբ, որպես կանոն, առավելապես պահանջող է, բան տվող, սպառող է, բան ստեղծող, բնադատող է, բան ինքնաբերական: Այս իրողության բազմաթիվ հիմնավորումներ կարելի է բերել՝ սկսած ամենակենցաղայինից մինչև համամարդկային էթնոհոգեբանականն ու բարոյականը: Վերջապես այս իրողության ամենուրեքության եւ ամենաժամանակության վկայությունն է «Աչքիդ գերանը թողած» ուրիշի աչքի փուշն եւ տեսնում» իմաստությունը: Բայց չապավինենք դարավոր ճշմարտություններին: Բավական է նայենք մեր շուրջն ու մեր ներքը, եւ անմիջապես ակնհայտ կդառնա, թե հաճախ որքան հեռու ենք մեր իրավունքների ու պարտականությունների համաչափ եւ, որ ամենկարեւորն է, առարկայական գնահատումից: Նայենք հանրային համակեցության մեր դրսեւորումներին. մենք՝ տանը, փողոցում, դպրոցում, խանութում, հասարակական տրանսպորտում, մենք՝ երեխայի եւ տարեցի հետ հարաբերվելիս, այս կամ այն երեւոյթը դրվատելիս կամ



մերժելիս... Ու կտեսնենք, որ ամենուրեք նախեւառաջ պահանջատեր ենք, հետո միայն, եթե, իհարկե, դաստիարակությունն ու հավակնոտության աստիճանը թույլ են տալիս, պահանջ կատարող: Օրինակները բազում են. մայրաքաղաքի տրանսպորտային հոսքերը կանոնակարգելու եւ «բաղաբարեւոյ» իշխանությունների խոստացած եւ մեր աչքի առաջ իրականացվող ձեռնարկումներին մեր անբաղաբարեւոյ եւ փոխանհարգալից պահվածքը հակադրելուց սկսած՝ մինչև ազգականահարեանային անհեթեթ վեճակները, որ արդեն տխուր ավանդույթ են դար-

ձել եւ ավարտվում են լավագույն դեպքում մարմնական վնասվածքներով, երբեմն՝ նաեւ սպանությամբ, սկսած «գողականության» ախտի ներթափանցումից երիտասարդության, մասնավորապես՝ ուսանողության մեջ, մինչև մեծերի, հատկապես ծնողների հանցավոր անտարբերությունը երեխաների դաստիարակության հանդեպ, երթուղայինում տարեցին տեղ չգիջելուց, մինչև մի բուռ գունավոր մետաղի համար թանկարժեք սարքերի եւ համակարգերի փչացումն ու ոչնչացումը...

Սա մենք ենք: Որքան էլ բարբառենք հազարամյա բաղաբարեւոյությունից, մշակույթից, բրիտանյա լինելուց եւ այլն, սա մենք ենք, որ Աստծո ամեն օր խախտում ենք մեր իրավունքի եւ պարտականության համակշռությունը, տարեվերջյան հանրագումարով հաշվում դրա հետեւանքով կրած կորուստները եւ ամեն տարեկգրի բարձրաձայն կամ մտքում խոստանում, որ էլ չենք անի: Բայց շարունակում ենք անել: Եվ շարունակելու ենք, բանի դեռ չենք գիտակցել, որ հասարակական կյանքի կենսունակությունը պայմանավորված է հասարակության ինքնամաքման եւ ինքնակրթման ունակությամբ, բանի դեռ պարտականությունը չենք գերադասել իրավունքից եւ «ես»-ը խոնարհի հպարտությամբ չենք հռչակել «մենք»-ի ընդամենը մաս:

Պատմիկ ՊՈՊՈՍՅԱՆ

հայտնելով, որ այն ձեռք է բերել երկու տարի առաջ:

Դարձյալ դեկտեմբերի 12-ին ոստիկանության Հրազդանի բաժին եկած Հրազդանի 37-ամյա բնակիչն էլ կամավոր հանձնել է գործարանային համարով «Կալաշնիկով» ինքնաձիգ, 29 հատ 5,45 մմ տրամաչափի փամփուշտ եւ հայտնել, որ դրանք գտել է տան բակի շինությունն ապամոնտաժելիս:

Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Բաղրամյանի բաժնում էլ Լեռնագոգ գյուղի 64-ամյա մի բնակիչ կամավոր հանձնել է պայթուցիչներով երկու նռնակ, տարբեր տրամաչափի 360 փամփուշտ, սվին-դանակ եւ այլ ռազմամթերք:

Նշանակվել են դատաձգաբանական փորձաքննություններ: Հիշեցնենք, որ ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնողներն ազատվում են քրեական պատասխանատվությունից:

Խուլիգանություն՝ կրակոցներով

Դեկտեմբերի 16-ին տաքսու մի վարորդից ոստիկանությունում հաղորդում է ստացվել, որ կես ժամ առաջ մի ուղեւորուհու է տարել Ջուլիսի, իսկ Կոմիտասի պողոտայում «Մերսեդես» մեքենան խանգարել է իրեն, ինքը չի կանգնել, սկսել են ատրճանակից կրակել իր մեքենայի վրա, ուղեւորուհին էլ փախել է նրանց մոտ:



Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ Ա. Խաչատրյան եւ Վ. Վաղարշյան փողոցների խաչմերուկում «Տոյոտա Կորոլա» մեքենայի 23-ամյա վարորդը, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, կրակայրիչ ատրճանակից կրակոցներ է արձակել տաքսու ուղղությամբ եւ դիմել փախուստի:

Կասկածյալը ոստիկանությունում տվել է բացատրություն:

Կատարվում է քննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Չենք լքված մեքենայում



Դեկտեմբերի 16-ին ոստիկանության Դիլիջանի բաժնում ահագանգ է ստացվել, որ մոտ մեկ ամիս է կասկածելի մեքենա է կայանված Մյասնիկյան փողոցում:


Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը մեքենայի սրահում հայտնաբերեց գործարանային համարով ինքնաձիգ, ինքնաձիգի պահուցակ լիցքավորված փամփուշտներով:

Պարզվեց, որ մեքենայի համարանիշերը գողացված են, իսկ թափքի եւ շարժիչի նույնականացման համարները՝ ոչնչացված: «ՎԱԶ-2107»-ը տեղափոխվել է ոստիկանության Դիլիջանի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Ձեռնարկվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ մեքենայատիրոջ ինքնուրույն պարզելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ: Նշանակվել են դատաձգաբանական փորձաքննություններ:

Հայտնաբերվել են մեքենայի գողացված հայելիներ

Դեկտեմբերի 16-ի գիշերը ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները հայտնաբերել են օտարերկրյա դիվանագիտական հաստատության «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի գողացված կողային հայելիները, որոնք հափշտակած երիտասարդը վաճառել էր:



Հիշեցնենք, որ դեկտեմբերի 14-ին, ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում էր ստացվել, որ գողացել են օտարերկրյա դիվանագիտական հաստատություններից մեկի հաշվեկշռում գտնվող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի կողային հայելիները: Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները, ձեռնարկելով օպերատիվ տարաբնույթ միջոցառումներ, պարզել էին հանցագործությունը կատարած անձի ինքնությունը: Երեւանի բնակիչ, 16-ամյա պատանին ոստիկանության Կենտրոնական բաժնում ղեպքի վերաբերյալ տվել է համապատասխան բացատրություն:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Չենք-զինամթերքի հանձնում



խատանքի արդյունքում Մեծամորի բնակիչ, 25-ամյա մի երիտասարդ բաժին է բերել գործարանային համարով ատրճանակ եւ ատրճանակի դատարկ փամփուշտատուի:

Ոստիկանության Նաիրիի բաժնի եկած 43-ամյա եղվարդցին էլ կամավոր հանձնել է 16 մմ տրամաչափի փամփուշտ կրակող որսորդական հրացաններ: Նրա հայտնածով՝ հրացանները պատկանել են հանգուցյալ պապին:

Նշանակվել են դատաձգաբանական փորձաքննություններ:

Տարված բացատրական աշխատանքի արդյունքում դեկտեմբերի 12-ին ոստիկանության Աշտարակի բաժնի եկած 29-ամյա երիտասարդը, որը Ուզան գյուղի բնակիչ է, կամավոր ներկայացրել է «Մակարովի» նմանվող, գործարանային համարով ատրճանակ՝

Բնակարանագողը բռնվեց դեպքի վայրում

Ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները Այնթապ գյուղի 4-րդ փողոցի տներից մեկում բռնեցին Երեւանի բնակիչ, 46-ամյա մի տղամարդու: Տունը, որտեղ հայտնաբերվեց տղամարդը, ո'չ նրանն է, ո'չ էլ հարազատներից մեկինը:




Դեկտեմբերի 13-ի գիշերը տանտերն ահագանգել էր ոստիկանության Մասիսի բաժնի ու հայտնել, որ հարեւանները զանգել են իրեն ու ասել, որ տունը գող է մտել: Մասիսի ոստիկանների արագ արձագանքման շնորհիվ բնակարանագողը հենց բնակարանում էլ բռնվեց՝ չհասցնելով լքել դեպքի վայրը:

Տղամարդը բերման ենթարկվեց ոստիկանության Մասիսի բաժնի, ապա ներկայացվեց տարածքային նախաքննական մարմնին:

Քրեական գործ է հարուցվել:

Նեղ մասնագիտական գողություն

Դեկտեմբերի 5-ին ոստիկանության Էրեբունու բաժնում հաղորդում էր ստացվել, որ ատամնաբուժական խանութից գողացել են ատամնաբուժական սարքավորումներ եւ գործիքներ: Բաժնի քրեական հետախույզության բաժանմունքի ծառայողները ձեռնարկեցին տարաբնույթ օպերատիվ միջոցառումներ՝ պարզելով դեպքի մի շարք հանգամանքներ եւ կասկածյալի ինքնությունը:



Օպերիվագործների տեսադաշտում հայտնվեց Նոր Խարբերդի 50-ամյա մի բնակիչ, որը դեպքից հինգ օր անց Արարատի մարզի Այգեգարդ գյուղում հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Էրեբունու բաժնի: Հետագա միջոցառումներով ոստիկանները հայտնաբերեցին նաեւ գողոնը:

Դեպքի առթիվ նյութեր են նախապատրաստվում:

Հանգամանքները պարզվում են:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

244-րդ հոդվածը մարդ մնալու մասին է

Վրատերը հիմնականում քաղաքներում գրանցվող պատահար է, այսպես ասած՝ քաղաքային միջադեպ: Չենք ուզում ասել՝ հանցանք ու հանցագործություն, քանի որ իր էության մեջ այն իսկապես, դիտավորություն չենթադրող ճանապարհատրանսպորտային պատահար է, ոչինչ ավելի, իհարկե, բացառությամբ այն դեպքերի, երբ ոմանց կողմից մեքենան օգտագործվում է որպես սպանության կամ մարմնական վնասվածք հասցնելու գործիք, տեխնիկական միջոց:



Խոսքն այսօր պատահարների մասին է, վրատերների, բայց այնպիսի, որոնց դեպքում արդեն ոչ միայն քրեորեն, այլև բարոյականության տեսանկյունից կիրառելի են հանցանք ու հանցագործություն եզրույթները: Սրանք այն դեպքերն են, երբ վարորդը վրատերը կատարելուց հետո տուժածին անօգնական թողնում է ուղիղ վայրից դիմում է փախուստի:

Գյումրու բժշկական կենտրոնից ահազանգ էր ստացվել ոստիկանության Կոմայրիի բաժին, որ վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել մի տղամարդ: Ոստիկաններին նա հայտարարել է, որ ձեռքի կտրվածքը վրատերի հետեանք է, որ իրեն վրատեր է ենթարկել սպիտակ գույնի մի «Ձապորոժեց», Գյումրիի Սայաթ-Նովայի փողոցում, երթևեկելի մասում, անցման համար նախատեսված նշագծումների վրա:

Հարուցվեց քրեական գործ, ինչպես որ կարգն է, ձեռնարկվեցին օպերատիվ-հետախուզական ու քննչական գործողություններ, ել

յանը, որն էլ խոստովանեց, որ վրատերը կատարել է ինքը՝ իր «Ֆոլքսվագեն Գոլֆ» մակնիշի ավտոմեքենայով:

Բարեբախտաբար, կանայք թեթև են պրծել, բայց խոսքն էլի բարոյականության մասին է: Ու՛ ոչ միայն: Պարզվում է, որ հակաբարոյական արարքների վերաբերյալ որոշակի դիրքորոշում ունի նաև քրեական օրենսգիրքը: 244-րդ հոդվածը վերնագրված է այսպես՝ Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը: Մեջբերենք հոդվածը գրեթե ամբողջությամբ. «Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը տրանսպորտային միջոց վարող էլ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Բայց քրեական օրենսգիրքը դեռ մի կողմ, հարկավոր է պարզապես մարդ մնալ...
Արա ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ոստիկանները բացահայտել են ապօրինություններ



Ոստիկանության Գորիսի բաժնում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Հայաստանում գործող բջջային օպերատորներից մեկի՝ Գորիս քաղաքի մասնաճյուղի ղեկավարը ապօրինություններ է թույլ տվել: Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ մասնաճյուղի աշխատակիցները

րից մեկը 2010-ից 2013 թվականների ընթացքում չի հաճախել աշխատանքի, սակայն նրա անվամբ դուրս է գրվել աշխատավարձ: Նախնական հաշվարկով ընկերության ֆինանսական միջոցներից դուրս է գրվել խոշոր չափերի ընդհանուր 2 միլիոն 110 հազար դրամից ավելի գումար, որը յուրացվել է: Նախապատրաստված նյութերի հիման վրա ոստիկանության Գորիսի բաժնում քրեական գործ է հարուցվել պաշտոնական դիրքն օգտագործելով խոշոր չափերի յուրացման կամ վատնման հատկանիշներով: Քրեական գործը ոստիկանությունից փոխանցվել է տարածքային քննչական բաժնի՝ հետագա քննության: Հանգամանքները պարզվում են:

Գողացած քարտով փող էր կանխիկացրել

Դեկտեմբերի 11-ին Մեծամոր քաղաքի փարեց բնակչուհիներից մեկը ոստիկանության Մեծամորի բաժնում հաղորդում էր փվել, որ հարմարեցված բանալիով բացել են իր բնակարանի դուռը եւ գողացել ննջասենյակի պահարանում դրված բանկային քարտն ու մեկ ամսվա թոշակը:



Բանկային քարտի հետ նաև ծածկագիրն էր եղել: Քարտը գողացած անձը անմիջապես գումար էր կանխիկացրել: Ոստիկանության Մեծամորի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ միջոցառումների արդյունքում սպացած փղեկություններ

ների վերլուծությամբ փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ թոշակառուի փան դուռը կրկնօրինակ բանալիով բացել էր գողություն է արել Մեծամորի 17-ամյա մի միջապես գումար էր կանխիկացրել: Քաղաքային շտաբից նա ներկայացավ ոստիկանության Մեծամորի բաժնի: Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Գողանալ թոշակառուներից



Նոյեմբերի 16-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները, ձեռնարկելով տարաբնույթ օպերատիվ միջոցառումներ, փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ երեք գողությունները կատարել է նույն անձը: 37-ամյա տղամարդը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժնի, որտեղից ներկայացվեց դեպքերի նախաքննությունը վարող մարմնին ու տվեց խոստովանական ցուցմունք: Նա կալանավորվել ու տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ: Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:
Մարտուն ՄԻՍՈՆՅԱՆ

հազար դրամ է 200 դոլար, իսկ երկրորդ դեպքում՝ 110 հազար դրամ ու 11 հազար ռուբլի: Տուժողները դարձյալ միայնակ թոշակառուներ էին: Ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները, ձեռնարկելով տարաբնույթ օպերատիվ միջոցառումներ, փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ երեք գողությունները կատարել է նույն անձը: 37-ամյա տղամարդը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժնի, որտեղից ներկայացվեց դեպքերի նախաքննությունը վարող մարմնին ու տվեց խոստովանական ցուցմունք: Նա կալանավորվել ու տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ: Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:
Մարտուն ՄԻՍՈՆՅԱՆ

«Մաուզլիի» նոր արկածները

Նոյեմբերի 19-ին ոստիկանության Շենգավիթի բաժնում հաղորդում էր ստացվել, որ ցերեկը կտրել են Կարմիր բլուրի փողոցի տներից մեկի պատուհանը եւ փող գողացել: Գողություն կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ հետաքննություն իրականացնող մարմինը որոնողական աշխատանք ձեռնարկեց. օպերատիվ հարցումներ իրականացրին, ուսումնասիրվեցին հարակից շենքերի եւ օբյեկտների մոտ տեղադրված տեսախցիկների տեսագրությունները: Տեսահսկող սարքերը ֆիքսել էին, թե դեպքի վայրից ոչ հեռու հան-



ցամիտն ինչպես է իջնում «Մերսեդես» մակնիշի տաքսի մեքենայից, իսկ քայլելիս փորձում է թաքցնել դեմքը: Տեսագրությունների վերծանումից պարզվեց, որ բնակարանային գողությունը կատարել է «Մաուզլի» մականունով 31-ամյա մի տղա-

մարդ, որը ներկա պահին մեկ այլ հանցագործության համար կալանավորված է եւ պատիժը կրում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Հիշեցնենք, որ նախկինում յոթ անգամ դատապարտված էր այժմ գողության համար քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող 31-ամյա դատապարտյալը նոյեմբերի 18-ին հիվանդանոցից դիմել էր փախուստի եւ իրավապահների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ բռնվել: Փաստորեն, ազատության մեջ լինելով՝ հենց նոյեմբերի 19-ին կատարել էր վերջին գողությունը: Նախաքննությունը շարունակվում է:
Գոռ ՎԱՆՅԱՆ

Գողից էլ գողացան

Դեկտեմբերի 11-ին՝ ոստիկանության Մասիսի բաժնում մի տղամարդ հաղորդում տվեց, որ կտրել են իր չգործող ընկերության պահեստի երկարթե դռան փականը, մտել ներս ու 70 հազար դոլար գողացել: Դեպքի վայր մեկնած ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները պարզեցին կատարվածի որոշ հանգամանքներ: Հարուցվեց քրեական գործ: Ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Մասիսի բաժնի քրեական հետախույզները, համագործակցելով Արտաշատի բաժնի ծառայողների հետ, ընդամենը ժամեր անց հետքը գտան: Ոստիկանների տեսադաշտում հայտնվեց հաս-



տատության նախկին պահակը: Դեպքի հետ նրա առնչության վերաբերյալ փաստական տվյալների հիմնավորումից հետո Նոր Խարբերդի 58-ամյա բնակիչը դեկտեմբերի 12-ին բերման ենթարկվեց ոստիկանության Մասիսի բաժնի: Նույն օրը ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները

զննություն կատարեցին բերման ենթարկվածի տանը: Ձեռք բերված տվյալների համաձայն՝ գողացած փողը թաղել էր տնամերձ հողամասում: Իրավապահները հայտնաբերեցին եւ ազդրվեցին 50 հազար դոլար եւ 3000 եվրո: Ըստ բնութագրման այս պահին հայտնի տվյալների՝ տղամարդը գողացած փողը տվել էր 25-ամյա որդուն ու պատվիրել, որ հողամասում թաղի: Որդին, առանց հոր գիտության, գողոնից մի բանի հազար դոլար էր «թաքցրել»: Նույնիսկ, հասցրել էր մեքենա գնել, ինչը տեղափոխվել է ոստիկանության Մասիսի բաժնի պահպանվող հատուկ տարածք: Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:
Ս. Ս.

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Դանակ-պատառափաղ գնեն

Գյուլրի բաղաբի խանութներից մեկում հայտարարված գեղջի հետեւաբով հաճախորդների հոսքը մեծացել էր: Հսկիչ-վաճառողուհիները աշխատում էին ծանրաբեռնված գրաֆիկով: Խանութում տեսախցիկներ էին տեղադրված, որոնք եւս, այսպես ասած՝ աշախույժ էին: Չնայած դրան՝ հաճախորդներից մեկը, օգտվելով հարմար պահից, գողացավ 38 հազար դրամ արժողությամբ դանակներ, գդալներ եւ պատառափաղներ:



Կեցին գյուլրիաբնակ Մանուշակ Սողոմոնյանին, որը խոստովանական բացատրություն տվեց: Աշխատանք չունեն, երբեմն տարատեսակ աշխատանք կատարելով էր փող վաստակում: Ի դեպ, Մանուշակը հիշյալ խանութում հաճախ էր լինում եւ եւս երեք գողություն էր արել այնտեղից:

Սեպտեմբերի սկզբին խանութ մտավ անձեռոցիկ գնելու, սակայն հաջողացրեց գողանալ 8 հազար դրամ արժողությամբ խոհանոցային պարագաներ: Այնուհետեւ անձեռոցիկի համար վճարելով՝ դուրս եկավ խանութից:

Լուրջ: Օրեր անց գողոնը վաճառեց, իսկ մեկ շաբաթ անց վերստին լույս խանութում էր: Հարմար պահը որսալով՝ կրկին խոհանոցային պարագաներ գողացավ 7 հազար դրամ արժողությամբ: Այնուհետեւ դրամարկղում վճարեց էլեկտրական լամպի համար եւ հանգիստ հեռացավ:

Հանցավոր «հաջողություններ» Մանուշակին ոգևորել էր: Փող «վաստակելու» դյուրին ճանապարհը գտնված էր: Հիշտ է, գողության պահին ապրումներ էր ունենում, բայց, երբ եկամուտը գրպան էր դնում, դժվարությունները մոռացվում էին: Հերթական գողություն էլ հաջող ավարտվեց: Սակայն Մանուշակի հանցավոր ոգևորությանը վերջակետ դրեցին իրավապահները:

Նրա արարքում առկա էր բրեւական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, բրեւական գործի հարուցումը մերժված է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սիրոցը՝ նախորդ համարում

«Մտածող» հայացք

Հայացքը կարող է միտք արտահայտել եւ մտքեր տեղափոխել: Նման եզրակացության համար Բ. Կաթինսկուն հիմք է տվել Դուրովի հետ իրականացրած մի գիտափորձ:

Կենդանավարժը, մասնագիտական հանձնաժողովի ներկայությամբ, սեւեռուն նայելով շան աչքերի մեջ՝ մտովի հրամայել է կատարել հետեւյալ գործողությունները՝ դուրս գալ մախասենյակ, մոտենալ հեռախոսի սեղանիկին, ատամներով վերցնել հեռախոսագիրքն ու տանել հյուրասենյակ: Դուրովն ընդամենը կես րոպե է նայել շան աչքերի մեջ, եւ ամեն ինչ կատարվել է ճշգրտորեն ու պահանջված հաջողականությամբ: Արձանագրության մեջ, ի դեպ, նշվում էր, որ, հեռախոսագրքից բացի, սեղանին այլ գրքեր էլ կային, իսկ Դուրովն այդ ընթացքում հյուրասենյակում էր՝ շան տեսողատից դուրս:

Միայն 1920-1921 թվականներին Դուրովի մասնակցությամբ այս կարգի 1278 գիտափորձ է իրականացվել, ընդ որում, վարժեցնողն ասում էր, որ կենդանու աչքերի մեջ նայելով ինքը ոչ թե կոնկրետ հրաման է արձակում, ասեմք «գնա», այլ պատկերացնում է գնալու գործողությունը, որն էլ նույնությամբ կատարում է կենդանին...

Տղամարդիկ եւ կանայք

Եթե համաձայնեմք հայացքով մտքեր հաղորդելու վարկածին, հասկանալի կդառնան մարդու հոգեբանության մեջ նկատված եւ արձանագրված մի շարք օրինաչափություններ: Օրինակ, գրուցելիս դիմացինի աչքերի մեջ ավելի հաճախ նայում են նրանք, ովքեր գրուցակցին իրենից ավելի ուժեղ, փորձառու, խելացի են համարում: Ինչպես աշակերտը ուսուցչի առջեւ՝ նրանք այդպիսով բացում են իրենց ուղեղը տեղեկատվության ու գիտելիքի համար: Այդ նույն պատճառով էլ պատմողն ավելի քիչ է նայում լսողի աչքերի մեջ: Նրա ուղեղում մտքերի ձեւավորման եռանդուն աշխատանք

է գնում, եւ լսողի հայացքը (այսինքն՝ մտքերը) կարող են խանգարել պատմողին: Նույն նպատակով, ինչպես նկատել էք, աշխատում ենք չնայել մեզ հետ վիճողի, մեզ վրա հարձակվողի աչքերի մեջ, սովորաբար նայում ենք քթարմատին կամ ճակատին: Դրանով մենք ապահովագրվում ենք նրա հայացքի բացա-



Աչքերի մոգությունը

սական էներգիայից: Եվս մի հետաքրքիր դիտարկում. կանայք տղամարդկանցից հաճախ են նայում դիմացինի աչքերի մեջ եւ ուղիղ հայացքը ոչ թե որպես սպառնալիք, այլ իրենց հանդեպ հատուկ վերաբերմունքի արտահայտություն են ընկալում:

Գիտնականները գտնում են, որ կնոջ այդ հատկությունը բնածին-բնագրական է. կինը մի կողմից, ջանում է ուշադրություն գրավել, մյուս կողմից՝ ենթագիտակցական մակարդակում «չփվել» դիմացինի հետ, կառավարել նրան: Դրա օրինակներն են, ասեմք, մոր հայացքով «գրույցը» նորածին երեխայի հետ, որը որոշակի ազդեցություն է ունենում...

Լայն բացված աչքերով

Աչքն, այսպիսով, համարվում է մտքի էներգետիկ հեռահաղորդիչ, այդ դեպքում բիրտ դառնում է հաղորդչի կենտրոնը: Հնում համարում էին, որ խոշոր բիբերը կենսական ուժի եւ էներգիայի վկայություն են, իսկ ծերանալու հետ կան հիվանդության դեպքում կորցնելով էներգիան՝ բիբերը փոքրանում են: Այս տեսակետն ընդունելու դեպքում կարելի կլինի հասկանալ, թե ինչու են այդքան գրավիչ խոշոր բիբերը. դրանք լի են ուժով ու առողջությամբ եւ դուր են գալիս նայողին: Բայց սա զուտ հոգեբանական բացատրություն է:

Կա նաեւ էներգատեղեկատվական վարկածը: Բիբերը լայնանում են, երբ արտաքին տեղեկատվության կարիք է զգացվում: Բիբերը խոշոր են մանկության տարիներին, երբ երեխան անհագուրդ ընկալում է աշխարհը, սթրեսային վիճակներում, երբ որոշում կայացնելու համար առավելագույն տեղեկատվություն է պահանջվում: Եվ բիբերն անմիջապես էլ նեղանում են, երբ կորչում է հետաքրքրությունը շրջապատող աշխարհի հանդեպ, երբ մարդը աշխատում է մեկուսանալ, փակվել ինքն իր մեջ, երբ զայրացած կամ հուսահատված է: Ենթադրվում է, որ վերոհիշյալ իրավիճակներում բիբերի նեղացման մի պատճառ էլ կա. դրանով կանխարգելվում է օրգանիզմի առանց այն էլ նվազած

կենսական էներգիայի անցանկալի արտահոսքը: Գիտնականները կարող են բնագրաբար զգալով բիբերի ուժն ու նշանակությունը՝ կանայք դեռեւս վաղմուշակա ժամանակներում դիմում էին բիբերի լայնացման ամենատարբեր միջոցների: Հին Հռոմում, իսկ ավելի ուշ՝ Իտալիայում եւ Իսպանիայում, նրանք աչքերի մեջ այդ նպատակով թունավոր խոտաբույսի՝ բելադոննայի հյութ էին կաթեցնում: Դրանից բիբը չափազանց լայնանում էր, աչքերը խորհրդավոր փայլ ու խորություն էին ստանում, ինչը կնոջն առանձնահատուկ գրավչություն էր տալիս: Պատահական չէ, որ բելադոննա իտալերեն նշանակում է «սքանչելի տիկին, գեղեցկուհի», իսկ Ռուսաստանում նույն խոտաբույսը կոչվում է «սիրունիկ»...

Սա՝ արհեստական խոշորացումը, բայց չմոռանանք, որ բիբերը խոշորանում են նաեւ ճգնաժամային, ավելի ողբերգական պահերին, օրինակ՝ մահվան մահճում: Սա փաստ է, որը դեռ գիտական բացատրություն չի ստացել եւ սպասում է խոր ու համակողմանի ուսումնասիրության: Գիտնականներից ոմանք, օրինակ, համոզված են, որ լայնացած բիբերը մահաներձ մարդուն հնարավորություն են տալիս ավելի լավ տեսնել այն «նուրբ» աշխարհը, ուր պիտի հեռանան:

Պատրաստեց Տաթև ՄԵՇՈՒՆՅԱՆ

Վաստակած կենսագրություն



բաղաբի ՆԳ վարչության պետավարտիչությունում:

Սա սկիզբն էր, հետո երիտասարդ սպայի համար ձգվելու էր պետավարտիչությունում աշխատանքային մեծ ուղին: Իսկ քառասնամյա բարեխիղճ ծառայության խոսուն վկայությունները փաստյակ խրախուսանքներն են:

Վլադիմիր Օհանյանի պրոֆեսիոնալիզմի շնորհիվ բազմաթիվ օրինազանցություններ, հանցագործություններ են բացահայտվել, նրա բարեխիղճ աշխատանքի շնորհիվ բազմաթիվ պատահարներ են կանխվել, նրա մասնագիտական գիտելիքներով կրթվել են պետավարտիչության բազմաթիվ կադրեր: Նա բազմիցս հանդես է եկել ճանապարհարանապորտային երթևեկության հիմնահարցերին վերաբերող հրապարակումներով:

Միշտ պարտասպասակամ, սրտացավ մարդ, նաեւ՝ սկզբունքային ու պահանջարկ սպա, որ կարգավանոն, օրինահարգություն փեսնելու ցանկությունից էր:

Ուրեմն, մնում է առողջություն ու անհոգ ծերություն մաղթել վաստակաշատ գնդապետին:

Չվարձալի ամփոփագիր

Սերունդների վեճ

62-ամյա մի տղամարդ հաղորդում էր տվել, որ 32-ամյա որդին բազկաթռի վրայից գողացել է իր 91-ամյա հոր ոսկյա շղթան եւ խաչը: Ձեռնարկվում են միջոցառումներ թռանում ու գողոնը հայտնաբերելու ուղղությամբ: Իսկ թռան որդին գուցե դեռ փոքր է...

Պարզվել էր՝ վիճողները հարսի համագյուղացիներն են, որոնք բերման են ենթարկվել ու խոստովանել:

Պապիկը, տատիկը եւ գազի բալոնը

Ոստիկանություն զանգած տղան հայտնում էր, թե գյուղում պապիկը տատիկին գազի բալոնով ծեծում է:

Շտապ մեկնած ոստիկանները պարզել են, որ 16-ամյա պատանին, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, խփել է հոր դեմքին պատճառելով վնասվածք: Հայրը հրաժարվել է հաղորդում տալուց:

Իսկ թե հատկապես ինչն էր վեճի պատճառը՝ հայտնի չէ: Պապիկ-տատիկ հակամարտության զազաբալոնային թեման սպառված է:

Մաքուր մոխրամանով հարված

Կեսգիշերին մոտ ոստիկանություն է զանգել հացատան 22-ամյա մաքրուհին եւ հայտնել, որ գործատուում, վիճաբանության ժամանակ, 28-ամյա մեկ այլ մաքրուհի մոխրամանով խփել է իր դեմքին՝ պատճառելով վնասվածք:

Երկրորդ մաքրուհին հացատանից բերման է ենթարկվել բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Ուշացած «նվեր» հարյուրամյակին

Հարյուր տարին վերջերս բոլորած մի կին հաղորդում է տվել, որ վիճաբանության ժամանակ 42-ամյա թոռը ձեռքերով խփել է իր գլխին պատճառելով ֆիզիկական ցավ:

Վերցրեց հարվածներն իր վրա

Հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ զանգուղեղային տրավմայով իրենց մոտ է տեղափոխվել 47-ամյա մի կին:

Մեկնած ոստիկաններին կինը հաղորդում է տվել, որ երկու ժամ առաջ հարսի հարկան տանը, խնջույքի ժամանակ, երկու տղամարդ վիճաբանել եւ քաշքշել են իրար, ինքը փորձել է բաժանել նրանց, որոնք էլ ձեռքերով հարվածներ են հասցրել իր մեջքին եւ գլխին:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության Ճանապարհներին

Դեկտեմբերի 19-ին Երեւանի Կոմիտասի պողոտայում «Արաբկիր» այգու մոտ անհայտ ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 60-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 19-ին Երեւանի Տիչինայի փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 23-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 20-ին Ալազյա-Արթիկ ճանապարհի 11-րդ կմ-ին «Լանդ Ռովեր» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթուղուց և կողաշրջվել. 49-ամյա վարորդը տեղում մահացել է:

Դեկտեմբերի 20-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Կոտայքի մարզի Նոր Դարձըրի կամրջի մոտ վրաերթի է ենթարկել 65-ամյա մի քաղաքացու, որը հիվանդանոցում, գիտակցության չզալով, մահացել է:

Դեկտեմբերի 20-ին Երեւանի Արտաշիյան եւ Մանթաշյան փողոցների խաչմերուկում «Յոնակ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 47-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 20-ին Երեւանի Գ. Նժդեհի եւ Մանթաշյան փողոցների խաչմերուկում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 55-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 20-ին Երեւանի Մայիսի 9-ի եւ Մանանդյան փողոցների խաչմերուկում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 66-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 20-ին Երեւանի Անդրանիկի փողոցում «Յոնակ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 72-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 20-ին Երեւանի Ա. Ավետիսյան եւ Վ. Վաղարշյան փողոցների խաչմերուկում «Պորշ» մակնիշի ավտոմեքենան վրաերթի է ենթարկել երկու քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Դեկտեմբերի 21-ին Արարատի մարզի Դարակերտ գյուղում «ՎԱԶ-2101» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 16-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 21-ին Մարտունի քաղաքի Երեւանյան փողոցում «ՎԱԶ-21150» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 6-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 21-ին Երեւանի Մարգարյան փողոցում «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 81-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 22-ին Երեւանի Շինարարների փողոցում անհայտ ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 49-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 22-ին Երեւանի Ջրաշենի 1-ին փողոցում «ՎԱԶ-21074» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 87-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 22-ին Երեւանի Ռուբինյան փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 56-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Դեկտեմբերի 22-ին Երեւանի Ռուբինյան փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 56-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Երջանիկ լինելու համար չափազանց կարեւոր է, որ մարդ հասկանա եւ գիտակցի իր կոչումն ու նշանակությունն այս աշխարհում: Ցանկացած մարդ յուրահատուկ է անկրկնելի է: Եվ ձեր առաջին քայլը դեպի հաջողություն այդ փաստի գիտակցումը պիտի լինի: Դա նշանակում է, որ կա մի գործ, ինչը դուք ուրիշներից լավ կանեք, որովհետեւ ձեզ այդպիսին են ստեղծել բնությունն ու Աստված: Այդ իրողությունը գիտակցելու դեպքում անհրաժեշտ է անել առավելագույնը՝ ձեր ունակությունները կատարելագործելու համար: Հիշե՛ք, որ Մոցարտը չէր գրի իր «Ռեքվիեմը» եւ Լեոնարդո դա Վինչին մեզ չէր պարզեւի իր «Տոկոնոլան», եթե առաջինը վաղ մանկությունից սկսած՝ օրական ժամեր շարունակ տարբեր գործիքներ չկվագեր, իսկ երկրորդը հազարավոր մատիտակներ չաւներ՝ մինչեւ գլխավոր ստեղծագործությանն անցնելը:

Գրող Դմիտրի Բիլենկինը հաջողության վերը բերված նախադրյալներին հավելում է նաեւ մարդու՝ դժվարությունները հաղթահարելու, հնարավորինը գերազանցելու բնական ձգտումը: Ինչպես ասել է Մոնտալը՝ «Փառքն ու հանգստությունը երբեք նույն անկողնում չեն քնում»: Ձեռքերումների մղումը մարդուն կյանքի ուրախություն է պարզեւում:

Ալեքսանդր Մակեդոնացին ցանկաւում էր նվաճել աշխարհը, Շիմանը՝ հայտնաբերել Տրոյան, Մագելանը՝ պտուղներ երկրագնդի շուրջը: Եվ պետք է ասել, որ նրանք հասան իրենց նպատակին: Սակայն բնավ պարտադիր չէ, որ մեր նպատակներն այդքան համընդգրկուն լինեն: Կարելի է կոնկրետ նպատակներ դնել, օրինակ՝ ջիփ գնել, գիրք հրատարակել, խոշոր գումար վաստակել եւ այլն: Չնայած, պատմությունը վկայում է՝ որքան մեծ խնդիր է իրեն առաջադրում մարդը, այնքան մեծ հաջողությունների է հասնում կյանքում: Գետը չէ վախենալ նպատակի մեծությունից, մասնավոր, որ նպատակները ոչ թէ մեր բանականությամբ են սահմանվում, այլ ծնվում են ենթագիտակ-

ցության խորքերում: Իրականում գիտակցությունը միայն օգնում է հասնել նրան, ինչն արդեն առաջադրվել է անգիտակցականի կողմից: Հետեւապես, չափազանց կարեւոր է հասկանալ սեփական ենթագիտակցական, հաճախ թաքուն մղումները եւ համարել դրանք ռացիոնալ նպատակներին, որոնք գիտակցության մակերեսային են: Խոշոր խնդիրներ ու նպատակներ առաջադրե-



Հաջողության հոգեբանությունը

լով՝ անհրաժեշտ է դուրս գալ սովորական, շարքային պատկերացումների շրջանակներից: Հիշե՛ք, որ ձեր հնարավորությունները եւ ունակությունները հարյուրավոր անգամներ գերազանցում են դրանց մասին ձեր պատկերացումներին:

Խնդրի էությունն ավելի լավ պատկերացնելու համար կարելի է օգտվել մասնագիտության ընտրության, այսպես կոչված՝ «երրորդություն» բանաձեւից՝ «Ուզում եմ-Կարող եմ-Պետք է»:

Կարիերայի ընտրության դեպքում նախ հարկ է որոշել՝ ինչով կուզեք զբաղվել, գործունեության որ տեսակն է ձեզ առավել մեծ հաճույք պատճառում: Ճիշտ ընտրությունն այդ դեպքում ուժեղ կտանապատիկ ձեր ուժերը: Բնախոսները դա կոչում են «դոմինանտ», հոգեբանները՝ «հուզական դրդապատճառ», արեւելյան միստիկները՝ «Կի էներգիա» կամ «ցիգուն»: Բանն այն է, որ իսկապես հաջողակ կարող է լինել այն գործը, որով սիրով ու հետաքրքրությամբ ես զբաղվում:

Մուլտիպլայն հոգեբանությունը

Բոլորը բնադատում են ծուլությունը, բոլորը պայքարում են դրա դեմ, սակայն ծուլությունն անապարտելի է, ինչպես որ անվախճան է մարդկությունը: Ինչո՞ւ են մարդիկ ձգտում հաղթել ծուլությանը: Որովհետեւ այն խանգարում է մեզ հասնելու դրված նպատակներին: Իսկ ինչո՞ւ մարդիկ չեն կարող հաղթել ծուլությանը: Որովհետեւ այն բնության կողմից մեր մեջ դրված գենետիկական պահպանիչ փականներից է, որը զսպում է մարդկային անհագ փառասիրությունն ու հավակնոտությունը:

Եթե փորձեք հիշել մարդկության ծագման պատմությունը, կարող եք տեսնել, որ ծուլության նախնական նշանակությունը էներգետիկ պաշարների խնայումն է, որոնք չէին բավարարում նախամարդուն: Վաղնշական մարդը շատ բան էր ուզում՝ եւ եղջերու որսալ, եւ նոր բարե կացին սարքել, եւ նկարներ անել բարանձավի պատերին, սակայն ուտելիքն այն ժամանակ բացարձակապես չէր հերիքում. հաջող որսի համար օրեր էին հարկավոր, ու միայն այդ դեպքում էր հնարավոր հագեցնել անվերջանալի բաղձը: Ուստի, հոգեբանության ենթագիտակցական մասը հետեւողականորեն սահմանափակում էր գիտակցության ավերորդային ակտիվությունը՝ հորինե-



լով զանազան պատճառներ ու պատրվակներ, խնայելով ուժերը, խոճուկ պաշարները պահելով միայն ամենանհրաժեշտ բաների համար, որոնք ուղղակիորեն կապված էին մարդու հիմնական պահանջմունքների բավարարման համար:

Երբեւէ փորձել եք ծուլանալ կատաղած շան հարձակումից պաշտպանվելիս, երկար բաղձելուց հետո սնունդ ընդունելիս կամ սիրախաղի ժամանակ: Այդպիսի պահերին ծուլությունը չբանում է եւ ի հայտ է գալիս, երբ, ասենք, պատրաստվում եք ստուգաբանի, աշխատում եք եռամսյակային հաշվետվության վրա կամ անհրաժեշտ է մաքրել բնակարանը: Մուլտիպլայն հիմքում Գնձ-ի մակար-

Այնուհետեւ պետք է գնահատել սեփական կարողություններն ու նախադրյալները: Դրանով սկսվում է «Կարող եմ» փուլը: Այդ ունակությունները կարող են ամենատարբեր բնագավառների վերաբերել, սակայն դրանք չհայտնաբերելու եւ չգնահատելու դեպքում դատապարտված կլինեք տխուր արդյունքների: Նման հեռանկարից խուսափելու համար անհրաժեշտ է կոնկրետացնել ու մանրամասնել ձեր ունակությունները, հայտնաբերել ձեր ուժեղ ու թույլ կողմերը, գտնել առավել ընդգծվածները կատարելագործելու ուղիներ:

Այս հատվածն անցնելուց հետո արդեն հասնում ենք վերջին ու վճռական՝ «Պետք է» փուլին: Մեր ենթագիտակցությունը խորամանկ ու ծույլ է, չի սիրում շտապել, շարունակ աշխատանքը հետաձգելու պատրվակ է փնտրում, ուստի նրա հետ «պայմանագիր կնքելիս» միշտ կոնկրետացրեք աշխատանքի կատարման հստակ ժամկետները: Չնայած դրան՝ Հանս Սեյլեն խորհուրդ է տալիս. «Եթե չեք ցանկանում ի սկզբանե դատապարտված լինել տապալման եւ ձեր նախածնունդությունների ծախողման, պետք չէ չափազանց բարձր նշան բռնել եւ անիրական խնդիրներ առաջադրել: Ումանց համար դրանք մոտ են մարդկային հնարավորությունների առավելագույնին, ումանց համար՝ նվազագույնին: Մեր բնածին ունակությունների շրջանակներում անհրաժեշտ է անել ամենը, ինչն ընդունակ ենք, ձգտել բարձր վարպետության»:

Ահա, նաեւ այս տեսանկյունից դիտելով՝ «երրորդության» վերջին՝ «Պետք է» մասը մեր կենսական մղումներն ու կարողությունները կապում է այլ մարդկանց, հասարակության պահանջմունքներին: Ուստի, առաջին երկու փուլերն անցնելուց հետո հարց տվեք ձեզ՝ ընտրած գործը հարկավոր է մարդկանց, պահանջված է հասարակության կողմից: Եվ եթե հարցի պատասխանը, անկախ նրանից, թե ընտրած գործունեության տեսակը որ բնագավառին է վերաբերում, դրական լինի, խիզախորեն անցեք գործի, զուգակցեք վերը բերված բոլոր բաղադրիչները, եւ հաջողությունը կանխորոշված է:

դակի ծրագրված բնագոյներն են, ուստի այն բնադատելը կամ դրա դեմ պայքարելը նույնքան անիմաստ է, որքան անիմաստ է ամեն օր սնվելու կամ սերունդը շարունակելու դեմ պայքարը: Խնդիրն այն է, որ այդ բնագործը դրված է մեր հոգեբանության ոչ գիտակցական հատվածում, իսկ ենթագիտակցության հետ ճիշտ վարվել մենք դեռ չենք սովորել:

Միայն ենթագիտակցականի ու գիտակցականի ներդաշնակության դեպքում կարելի է հաջողության հասնել կյանքում առանց բայքայելու առողջությունն ու հոգեկան աշխարհը: Այս առումով ուշագրավ է սիրտ-անոթային հիվանդությունների վիճակագրությունը. ինֆարկտ եւ ինսուլտ են տանում, զարկերակային բարձր ճնշումով տառապում են ամենից աշխատասեր, հաջողակ ու հավակնոտ մարդիկ, ովքեր զուրկ են բնածին ծուլությունից: Սա մի ծայրահեղությունն է, իսկ մյուս բեռնում հազարավոր «ծուլներ» են, ովքեր միայն ցանկանում են, բայց ոչինչ չեն անում, որովհետեւ չեն սովորել դիմակայել նույն այդ ծուլությանը: Ճշմարտությունը, ինչպես միշտ, միջնատարածքում է: Մի կողմից՝ մարդը պետք է կարողանա ուղղորդել իրեն մեծ գործերի՝ դրանց մեջ հետաքրքրություն ու հաճույք գտնելով, մյուս կողմից՝ միշտ պետք է լսել ենթագիտակցականի ձայնը եւ որոշակի պահի տրվել ծուլության, որը յուրովի է հոգում մեր առողջության ու կենսունակության համար:

Օպերատիվ

Կամբ, վճարակազմություն, հետևողականություն, նաև՝ սեր ու պատասխանատվություն զավակների, ծնողների, հարազատների նկատմամբ. սա է թմրամոլին բուժելու լավագույն դեղատոմսը: Կապավիներն այս դեղատոմսին մեր հրապարակման հերոսները, թե՛ կշարունակեն ենթարկվել թմրամիջոցի դավադրությանը: Բացարձակապես կախված է այն հանգամանքից, թե որքան կամբ ու վճարակազմություն ունեն, թե որքան են սիրում զավակներին, ծնողներին, թե որքան են գերադասում լիարժեք կյանքով ապրելը փուչ հաճույքից, մշուշոտ ու անհեռանկար ապագայից, առողջությունը, նաև՝ կյանքը կորցնելու սպառնալիքից...

Օգտագործել եւ իրացնել
Սարգիս Սուրենյանը թմրամիջոց վառուց է օգտագործում. չի էլ հիշում երբևէ անցած: Երկու-երեք տարի առաջ «ամեն»-ից ավելի «լուրջ» թմրամիջոցի անցավ: Ասում է՝ արդեն համարյա «հաճույք» չէր ստանում, ուստի անցավ «քիմիական» թմրամիջոցներին:

Ընկերոջ հետ էին զբաղվում «ինքնագործունեությամբ»: Սովորել էին պատրաստման եղանակը. անհրաժեշտ նյութերը հայթայթում ու միասին էլ թույլը ներարկում էին իրենց մարմինն ու «վայելում»... վարդագույն դարձած կյանքը:

2012 թվականի դեկտեմբերի վերջին ընկերը մահացավ: Թմրամիջոցն «օգնեց», որ քառասուն տարեկան տղամարդը ժամանակից շուտ հրաժեշտ տար կյանքին:

Սարգիսն ընկերոջ ճակատագրից դաս չառավ. ընդհակառակը՝ «ժառանգություն» ստացավ նրա թմրապարագաները, հունքը եւ արդեն մեծակ սկսեց պատրաստել «բալասան» ու ներարկվել: Դեռ ունեւ սկսեց փող աշխատել՝ իրացնել սեփական «արտադրանք» այլ թմրամոլների:

Սակայն ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախուզության աշխատակիցները, իրացնելով օպերատիվ տվյալները, կասեցրին Սարգիս Սուրենյանի թմրագործունեությունը:

Նրան առաջադրված մեղադրանքը քրեական օրենսգրքի 266 եւ 268-րդ հոդվածների հատկանիշներով է:

Նախաքննությունն ավարտվել էւ գործն ուղարկվել է դատաքննության:

Ծանր ելքով պատահարները հիմնականում տեղի են ունենում արագությունը գերազանցելու եւ ոչ սթափ վիճակում մեքենան վարելու հետևանքով: Փորձագետների կարծիքով՝ եթե վարորդները խստագույնս պահպանեն հատկապես այս երկու կանոնները, ապա պատահարների հետևանքով զոհվածների թիվն անհամեմատ կնվազի, որովհետև վտանգ առաջանալու դեպքում վարորդը կկարողանա օգտվել պատահարը կանխելու տեխնիկական հնարավորությունից:

Ամեն ոք պարտականություն ունի պահպանել ճանապարհային երթևեկության կանոնները, վարորդները՝ հատկապես: Վարորդը պարտավոր է այն գիտակցումն ունենալ, որ դեկի մոտ նստելու պահից պատասխանատու է երթևեկության բոլոր մասնակիցների առողջության ու կյանքի համար: Երթևեկության գրված կանոններից գատ կան նաև անչափ կարևոր՝ չգրված կանոններ, որոնք պահպանելը մույնքան առաջնահերթ է: Պատահարների հավանականությունը մեծանում է նաև այդ չգրված կանոնները չպահպանելու դեպքում:

Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի (ճանապարհ-

Ի՞ր հոգսերը

38-ամյա Արտակ Նավոյանը երեք անչափահաս երեխաների հայր է: Այսինքն՝ պարտականություններ, պատասխանատվություն, կենցաղային հոգսեր... Բայց Արտակը ժամանակն ավելի շատ այլ «հոգսերի» վրա է ծախսում:

Թմրամոլ է եւ օրն առանց այդ «կենարար» թույնի չի պատկերացնում: Նախկինում «շուկայից» էր հայթայթում կոդեինը: Բայց այդպես թանկ էր նստում: Որոշեց սովորել պատրաստման տեխնոլոգիան ու



Լիարժեք կյանք, թե՛ մշուշոտ ապագա

Այդ օրվանից ծանոթը տրամադրվել էր դեղատներին ստանում եւ տասը հաբը հինգ հազար դրամով վաճառում էր Մանուկ Սիմոնյանին...

Դեռ հոգեմետ նյութի կարիք էր զգում, զանգում, պայմանավորվում էր ու... Այս դեպքում հիվանդն էր «դեղ» հասցնողը, իսկ ինքը լիարժեք օգտվում էր ընծեմված հնարավորությունից:

Ոստիկանության Շենգավիթի քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, հետևեցին Մանուկ Սիմոնյանի ու նրա ծանոթի հերթական «առուվաճառքին»: Սիմոնյանը տաքսիով հասավ Արշակունյաց պողոտա ծանոթի տուն, հոգեմետ նյութի տասնհինգ հաբի համար վճարեց, նստեց իրեն սպասող տաքսին ու հայտնվեց ոստիկանների անակնկալի առաջ...

Դարուցված քրեական գործով որպես մեղադրյալ անցնող Սիմոն Մանուկյանն ու նրա ծանոթը խստովանել եւ ընդունել են հանցանքը: Քրեական գործը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան:

Ընկերները

Տարիքային տարբերությունը չէր խանգարել ընկերությանը. ավագը՝ Վարդգես Ալեքյանը, Սարգիս Գրիգորյանից մեծ է տասնյոթ տարով, Արթուր Շիրինյանից՝ տասը տարով: Նրանց մտերմացնողը թմրամիջոցն է:

Երեքն էլ Կիլիկիա թաղամասում են

անձամբ հոգալ իր հարցերը: Ուշիմ էր՝ սովորեց: Ու դրանից հետո կոդեին պատրաստելը դարձավ հաճելի զբաղմունք. ոչ միայն պատրաստման պրոցեսն էր դուրեկան, այլև վերջնաբրույնընքն սպասելն էր ավելի խորհրդավոր, հաճելի... Դպրոցում քիմիայից ընդունակությունները զրո էին. չէր սիրում ու չէր սովորում այդ առարկան: Ի՞նչ իմանար, որ մի օր քիմիան կարելու է իր կյանքում, եւ ինքը համարյա «քիմիկոս» է դառնալու:

Դերթական անգամ նմջասենյակում «արտադրական» պրոցեսի մեջ էր, երբ անակնկալի բերեցին ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզները:

Դատաճարկությունից փորձաքննության եզրակացությամբ՝ Արտակ Նավոյանը տառապում է կախվածության համախտանիշով եւ հարկադիր բուժման կարիք ունի: Կունենա՞ր բուժվելու կամբ, վճարակազմություն՝ գոնե հանուն երեք անչափահաս զավակների, միայն իրենից է կախված:

Դիվանդի դեղը

Մանուկ Սիմոնյանի ծանոթներից մեկը

Օրակարգում՝ անվտանգ երթևեկություն

հային երթևեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անգզուշությամբ առաջացրել է մարդու մահ) հատկանիշներով հարուցված քրեական երկու գործերի նախաքննությունն ավարտվել է եւ ուղարկվել դատարան:



ինքն ու մորաքրոջ աղջիկը բազմաթիվ վնասվածքներով տեղափոխվեցին հիվանդանոց:

Դատաւժտոտեխնիկական փորձաքննության եզրակացությամբ՝ Վարդան Սիբայեյանը իրականացրել է մեքենայի ոչ պատշաճ կառավարում հաշվի չի առել ճանապարհային ծածկույթի վիճակը եւ միջոցներ չի ձեռնարկել շրջադարձային հատվածը սահուն անցնելու համար, խախտելով ճե-4-ի կանոնները՝ իրեն զրկել է պատահարը կանխելու տեխնիկական հնարավորությունից ու կողաշրջվել ձորը:

Դիմա նա եւ մեղադրյալ է, եւ տուժող (մահացածը քույրն է):

Մահվան ելքով հաջորդ պատահարը գրեթե նույն ճանապարհահատվածում է տեղի ունեցել:

«Միջուրբիչի Լանսեր» մակնիշի մեքենայի վարորդ Սուրիկ Մաթեոսյանը (անուն-ազգանունը փոխված է) ուղեւորափոխադրումներ էր կատարում մայրաքաղաքից Սյունիքի մարզ: Ուրեմն, փորձառու լինելուց զատ պետք է որ առավել աշալուրջ, զգոն, երթևեկության կանոններին խստորեն հետևող լիներ:

Ասում են փորձաքննող մեկ անգամ է զալիս. այս դեպքում եկավ, երբ Սուրիկ Մաթեոսյանը չպահպանեց երթևեկության կանոնները:

Երեկոյան ժամը 9-ի կողմերն էր. Երեւան-Գորիս ճանապարհի 190-րդ կիլոմետրում անցել էին, երբ Մաթեոսյանը փորձեց վազանցել դիմացից ընթացող մեքենան: «Վազանը սկսելուց առաջ վա-

րնակվում, բայց թմրամիջոցը միասին վառելու են Շենգավիթ թաղամասում Արթուր Շիրինյանի բարեկամի տանը: Միայնակ ապրող տարեց տանտերը սիրահոժար թույլ էր տվել, որ նրանք ժամանակ առ ժամանակ «այցելեն» իրեն, խոհանոցն օգտագործելով որպես «լաբորատորիա»՝ տարբեր նյութերի ու բենզինի խառնուրդով թմրամիջոց պատրաստեն, ներարկվեն ու «լավ» զգան... Իսկ թե ինքն ինչից էր լավ զգում՝ հայտնի է միայն իրեն: Երբեք չի նախատել, չի արգելել թմրաորջ դարձնել իր բնակարանը. հյուրերն իրեն մեկ խանգարել, ավելին՝ ձեռի հետ մեկ-մեկ ուտելիք են բերել, գրուցընկեր եղել, հետը մի կտոր հաց կիսել...

Արշակունյաց պողոտա եռյակի հերթական այցի մասին տեղյակ էին ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները: Դայտնվեցին, երբ թմրամիջոցն արդեն պատրաստ էր օգտագործման, եւ, իրեղեն ապացույցով հանդերձ, եռյակին բերման ենթարկեցին ոստիկանություն:

Ոստիկանության Շենգավիթի քննչական բաժնում փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է: Գործն ուղարկվել է դատարան:

Նողագործը

Լոռեցի Ալեքսան Դակոբյանը հողագործությամբ է զբաղվում: Լավ վատ՝ հոգում է բազմադրամ ընտանիքի կարիքները: Տնեցիք էլ օգնում են հողը մշակելու գործում: Բայց մի օր այս հողագործի միտքը պղտորվեց, երբ գյուղի հանդամասում կանեփի թփեր տեսավ: Անտարբեր չանցավ. հավաքեց տերեւները, տարավ տուն: Տնեցիների աչքից հեռու տնամերձի մի անկյունում չորացրեց, մանրացրեց եւ մարիխուանա պատրաստեց: Այդ օրվանից սիրտն ուզած ժամանակ տնամերձում առանձնանում, վայելում էր թմրամիջոցը:

Նախաքննական մարմինն տված ցուցմունքում Ալեքսան Դակոբյանն ասում է, իբր թմրամիջոց օգտագործում է ստամոքսի ցավերը մեղմելու համար: Բժշկությունից ձեռք բաշել՝ թմրաբուժությամբ էր զբաղվում, փաստորեն: Թե որքանով էին ցավերը մեղմվում, հստակ չի կարող ասել, բայց որ արարքը բերորեն հետապնդելի է, հստակ իմացավ ոստիկանության Թունամյանի քննչական բաժնումնուցում:

Մնում է, որ հստակ պատկերացնի նաև թմրամոլության հետևանքները եւ արագ ձերբազատվի այդ ախտից:

Յ. Պ.

որոշ պետք է համոզվի, որ... հանդիպակաց երթևեկության գոտին, որը նա պատրաստվում է զբաղեցնել, բավարար տրաքծությամբ ազատ է վազանց կատարելու համար եւ դրանով խոչընդոտ չի ստեղծի հանդիպակաց ընթացող տրանսպորտային միջոցների համար».

Ճանապարհային երթևեկության կանոնների 73-րդ կետի պահանջն է սա: Մաթեոսյանն այս պահանջին հակասող գործողություններ է կատարել. դուրս է եկել վազանցի առանց նախապես համոզվելու վազանցի կատարման անվտանգության մեջ, ինչի արդյունքում բախվել է հանդիպակաց ընթացող «ԿամԱԶ» մակնիշի մեքենային: Մեկ զոհ եւ երեք վիրավոր: Մահացածը Ղազարստամից մի քանի օրով հարազատներին այցի եկած կին էր:

Առաջադրված մեղադրանքում Սուրիկ Մաթեոսյանն իրեն մեղավոր է ճանաչել եւ զղջացել կատարածի համար: Որպես ամփոփում. սեփական գործողությունների դրդապատճառները, ցանկություններն ու զգացմունքները հասկանալու ու ճիշտ գնահատելը միայն կօգնեն յուրաքանչյուր վարորդի ապահովելու անվտանգ երթևեկություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

1974 թ. հուլիսի 14-ին Բերմուդյան կղզիներում տաքսու վարորդը մահացու վրաերթի է ենթարկում 17-ամյա Նեվիլ Էբինին, որը մոպեդով գնում էր բաղաձայն փողոցներից մեկով: Ուղիղ մեկ տարի անց՝ 1975 թ. հուլիսի 14-ին, նույն փողոցով, նույն մոպեդի վրա ընթանում էր Նեվիլի եղբայրը՝ Էրսբին Էբինը, ում 17 տարին նոր էր լրացել: Եվ նրան էլ նույն փողոցում վրաերթի ենթարկում ու սպանում է նույն վարորդը՝ նույն տաքսիով: Ավելին՝ մեքենայում նստած էր նույն ուղեւորը, որ մեքենայում էր եղել մեկ տարի առաջ, վրաերթի օրը: Նման զուգահեռությունները ակամա հավատալ են տալիս, որ մեր կյանքը ինչ-որ առեղծվածային կերպով ենթարկվում է թվերի մոգությանը: Բայց իրո՞ք այդպես է, թե՛ թվերի հանդեպ հավատը հերթական սնապաշտություն է, որ հազարամյակներ շարունակ ուղեկցում է մարդկությանը...

Թվերը իշխում են


Որտեղի՞ց է հայտնվել թվերի սրբազան ուժի հավատը: Ակունքները մ. թ. ա. 6-րդ դարում են եւ առկայում են լեզենդար Պյութագորասի՝ թվագրագիտության հոր հետ: Նա մեզ բողբել է իր նշանավոր ուսմունքը թվերի ներդաշնակության, հոգու անմահության եւ մարդկանց՝ արդարության ու սիրո ձգտման մասին: Իր գաղափարները տարածելու համար նա դպրոց էր ստեղծել: Աշակերտների թվում կային նաեւ կանայք: Դպրոցը շուրջ 650 մարդ էր ընդգրկում, սակայն Պյութագորասն ուներ նաեւ գաղտնի հետետրոդներ, որոնք համոզված էին, որ թվերը բացարձակ իշխանություն ունեն բոլոր իրադարձությունների եւ կենդանի արարածների վրա:

Պյութագորասները պնդում էին, որ իրականությունը թվերն են: Այդ գաղափարը գերակա դարձավ մ. թ. ա. 5-րդ դարի կեսերին: Այս հմայվածությունը թվերով պահպանվեց երկար ժամանակ, հատկապես՝ չափման բնագավառում: Երբ հաջողվում էր չափել այս կամ այն առարկան, գիտնականները համարում էին, որ այն արդեն ճանաչված է: Հետեւաբար, թիվը համարվում էր ճանաչման գլխավոր միջոց, իսկ հիմքը կատարյալ ներդաշնակությունն էր: Օրինակ, պյութագորասյան Պոլիկետեսի կերտած տղամարդու քանդակը ներկայացնում էր կատարյալ ներդաշնակություն եւ թվերի համակարգը:

Այս համակարգի շնորհիվ Պյութագորասին հաջողվել էր հաշվարկել Հերակլեսի հասակը, այսինքն՝ թվերի միջոցով հնարավոր էր դառնում թափանցել պատմության խորքերը: Հետագայում դրան գումարվեցին նաեւ տեխնիկայի նվաճումները: Պյութագորասները մեծ նվաճումների հասան հատկապես տաճարների եւ թատրոնների շինարարության, հատուկ հարմարանքների շնորհիվ կատարյալ ակուստիկա ստանալու գործում: Նրանք մշակեցին «ծայնային ալիքի» տեսությունը, որի հիմքում այն գաղափարն է, որ ձայնը տարածվում է շրջանաձև ալիքներով, ինչպես ջուրը՝ քար նետելու դեպքում: Ուստի բավական էր տաճարում որոշակի միջնատարածքների վրա պղնձե կամ բրոնզե սկահակներ տեղադրել, որպեսզի ձայնը վերադառնա՝ որոշակի հնչողությամբ արձագանքելով դալիճի որոշակի կետերում: Սա կարելի է համարել բարձրախոսի առաջին նմուշը...

Տղամարդու թիվ եւ կնոջ թիվ

Թվային սնապաշտությունից գերծչեր նաեւ Չիզմունդ Ֆրեյդը: Հոգեվերլուծության հայրը տեսական ժամանակ վախենում էր, որ կմահանա 51 թվին: Այդ միտքը նրան ներշնչել էր մտերիմ ընկերոջ՝ բժիշկ Վիլհելմ Ֆլիսը, որը համարում էր, թե մարդու կյանքում բոլոր կարեւոր իրադարձությունները հանգում են 28 եւ



23 թվերին: Ֆլիսը դրանք մեկնաբանում էր որպես «կանացի եւ այրական շրջափոխերի» շարունակականություն: Ֆլիսի հետազոտությունները այնպես էին հմայել Ֆրեյդին, որ նրան համարում էր նույնպիսի մեծություն, ինչպիսին Կեպլերն էր կենսաբանության մեջ: Եվ չնայած Ֆրեյդը մահացել ոչ թե 62 տարեկանում, ինչպես ենթադրում էր, այլ 83-ում, 28 եւ 23 թվերը առկա են թե՛ նրա, թե՛ Ֆլիսի կենսագրության մեջ: Ֆլիսը մահացել է 1928 թվականին, իսկ Ֆրեյդը՝ սեպտեմբերի 23-ին:

Չնայած Ֆլիսի «շրջափոխերի տեսությունը» գիտական հիմնավորում չունի, շատերն են այն կիրառում հատկապես պատմական իրադարձությունների բացատրության համար: Ոմանք, օրինակ, պնդում են 24-ամյա փուլի գոյությունը Ռուսաստանի պատմության մեջ. 1893 թ.՝ Նիկոլայ 2-րդի գահակալումը, 1917 թ.՝ հեղափոխությունը, 1941 թ.՝ Հայրենական մեծ պատերազմը, 1985 թ.՝ «հին զորակոչի» գեներալների հեռացումը...

«Մատանի դյուժինը»

Կոմպոզիտոր Ռիխարդ Վագների կենսագիրները հանգել են եզրակացության, որ նրա ողջ կյանքը նախասահմանված է եղել 13 թվով. ծնվել է 1813 թվականին, մահացել՝ փետրվարի 13-ին, գրել է 13 օպերա, անունը (գերմաներեն գրությամբ) բաղկացած է 13 տառից, Վեբերի «Ազատ հրածիզը» օպերայի պրեմիերան, որը մեծ ազդեցություն է ունեցել Վագների վրա, տեղի է ունեցել հոկտեմբերի 13-ին, «Ձանգեյզեր» օպերան ավարտել է 1844 թ. ապրիլի 13-ին, 13 տարի անցկացրել է վտարանդության մեջ եւ այլն: Այս տվյալներն առնված են «1000 հրաշալիք» գրքից, որը լույս է տեսել... 1913 թվականին:

Ռուսաստանում անցկացված հարցումներով այդ երկրի յուրաքանչյուր երրորդ բնակիչ 13-ը «վատ» թիվ է համարում, իսկ թե՛ 13-ը նաեւ ուրբաթ է, սնահավատներն ընդհանրապես խուճապի են մատնվում:

Այս տաղանալի երբեմն աներեւակային «հակազդեցությունների» տեղիք է տալիս: Օրինակ, Ֆրանսիայում ընդունված է կանչել պրոֆեսիոնալ «14-րդ

հյուր», եթե հրավիրվածների թիվը 13 է: Անգլիայում ընդունված է սեղանի շուրջ, 13-րդ աթոռին, թավշե արջուկ «նստեցնել», որին «հեռացնում» են, երբ հյուրերը զբաղեցնում են իրենց տեղերը:

«Չար» թվի տաղանալի առկա է նաեւ սկանդինավյան առասպելաբանության մեջ: Վալգայում ինչոյքների ներկա էին 12 աստվածներ, սակայն 13-րդի՝ Լոքի հայտնվելուց հետո վեճ սկսվեց, որը կյանք արժեցավ բոլորի սիրելի Բալդրի համար, ինչն էլ աստվածների եւ աշխարհի կործանման պատճառ դարձավ:

Նարավոր է, որ 13 թվի տաղանալի շատ ավելի հին ակունքներ ունենա: Հին հունական բանաստեղծ Հեսիոդոսը «Վաստակներ եւ օրեր» աշխատության մեջ հորդորում է ձեռնպահ մնալ զարնանացանը 13-ին սկսելուց, իսկ միջերկրյան արքա Ագամեմնոնը ուխտադրուձ Կլիթեմեստրայի ձեռքով սպանվում է 13-ին:

Բարեխոսում անհիշելի ժամանակներից 12-ը սրբազան թիվ էր համարվում: Կենդանակերպի համաձայն՝ տարին բաժանվում էր 12 ամսվա, իսկ ցերեկն ու գիշերը՝ համապատասխանաբար՝ 12 ժամի: Այս սահմանն անցնելը չարագուշակ նշան էր:

Մի շարք երկրներում, նկատի ունենալով մարդկանց սնապաշտությունը, փորձում են խաբել ճակատագրին: ԱՄՆ-ի որոշ հյուրանոցներում, օրինակ, չկա 13-րդ հարկ, 13-րդ սենյակ եւ այլն: Նույնը նաեւ մի շարք ավիաընկերությունների ինքնաթիռներում, իսկ Գերմանիայի ճեպընթաց գնացքներում 12-րդ վագոնին միանգամից հաջորդում է 14-րդը: Մի ամերիկացի այնպես էր սարսափել «չար» թվից, որ ամուսնության 12-րդ տարվա ավարտին բաժանվել է կնոջից, իսկ 14-րդի սկզբին նորից ամուսնացել... Նույն կնոջ հետ, սակայն շարունակվել է 13-ին դուրս չգալ տնից եւ չի կարողում գրքերի ու ամսագրերի 13-րդ էջերը...

Սնապաշտության պատկերները

Բարեբախտաբար «չար» թվի, ինչպես եւ ուրբաթ օրվա սին սարսափը տարածվում է միայն սահմանափակ թվով մարդկանց վրա ու որոշ տարածքներում: Հինդուիստական եւ իսլամական երկրներում ուրբաթը երջանիկ օր է համարվում: Այս առումով ուշագրավ է գերմանական ասացվածքը՝ «Ուրբաթ սիրեցի՞ր՝ շուտ կամուսնանա»: Անգլոսաքսոնները սիրում են ասել՝ «Փառք Աստծո, արդեն ուրբաթ է»: Այս դարձվածքի հապավումը՝ «T.G.I. Friday's» նույնիսկ անվանում է դարձել ռեստորանների ցանցի համար:

Կաբալան ուրբաթն առանձնակի բարենպաստ օր է համարում: Հին հրեերենում եւ արաբերենում «Ուսն» աստվածային անվան թվային արժեքը 13-ն է, իսկ Աստվածաշնչի Մովսեսի Երկրորդ գրքից կարելի է տեղեկանալ 13 աստվածային հատկություններին: Ուշագրավ է նաեւ, որ Միջնադարում քրիստոնյաների կողմից 10-ի (պատվիրանները) եւ 3-ի (երրորդություն) համակցությունը բացարձակապես դրական էր ընկալվում, իսկ կյուրդիկոս 13-րդ թագավորի ամենասիրած թիվն էր, երեւի հենց դրա համար էլ Աննա Ավստրիացու հետ ամուսնացավ, երբ նա 13 տարեկան էր:

«Չար» թվի «հետետրոդներ» կան ու դեռ լինելու են, սակայն ուշագրավ է, որ նրանցից ոչ մեկը դեռեւս չի հրաժարվել 13-րդ աշխատավարձ ստանալուց...



Դեկտեմբերի 14-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի ՔՔԲ ծառայողները, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, Կոնդի փողոցի տներից մեկում հայտնաբերեցին եւ բաժին բերման ենթարկեցին 28-ամյա Կարեն Դ.-ին, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 185-րդ (Գույքը դիտավորությանը ոչնչացնելը կամ վնասելը) եւ 177-րդ (Գողությունը) հոդվածների մեղադրանքով:

Ոստիկանության Մուշի բաժնի ՔՔԲ ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 15-ին «Շիրակ» օդանավակայանում հայտնաբերվել է բաժին բերման է ենթարկվել Մոսկվա-Գյումրի չվերթով 33 ժամանած 34-ամյա Գրիգոր Մ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 185-րդ (Գույքը դիտավորությանը ոչնչացնելը կամ վնասելը) եւ 118-րդ (Օծծը) հոդվածների մեղադրանքով:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 15-ին Երեւանի Կոմիտասի պողոտայից բերման է ենթարկվել 41-ամյա Վիլեն Շ.-ն որը Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 259-րդ հոդվածի (Անբարեկցության մասին սուտ հաղորդում տալը) մեղադրանքով:

Ոստիկանության Երեւանու բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ դեկտեմբերի 13-ին կամավոր բաժին է ներկայացվել Աթոյան փողոցի 48-ամյա մի բնակիչ, որը հետախուզվում էր դիտավորությանը առողջությանը ծանր վնաս պատճառելու մեղադրանքով:

Ոստիկանության ՔՔԳԵ Ե Արարատի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ դեկտեմբերի 13-ին Մյունխեն-Երեւան չվերթով Դայաստան է վերադարձել եւ ներկայացվել ոստիկանություն 16-ամյա մի քաղաքացի, որը ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր ապօրինի կերպով գեներ, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու մեղադրանքով:

Դեկտեմբերի 13-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնի եւ անձնագրային բաժանմունքի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ կամավոր բաժին է ներկայացվել Էջմիածին քաղաքի 31-ամյա մի բնակիչ, որը ՈՂ Աղիգեայի Դանրապետության ՆԳՆ կողմից հետախուզվում էր խարդախության մեղադրանքով:

Ոստիկանության Կապանի բաժնի ծառայողները, Մալաթիայի բաժնի ծառայողների հետ համատեղ իրացնելով քրեական հետախուզության գլխավոր վարչությունում ստացված տվյալները, դեկտեմբերի 16-ին Կապան քաղաքի 3. Ավետիսյան փողոցից բերման են ենթարկվել 31-ամյա Իշխան Ա.-ին, որը նոյեմբերի 11-ից Մալաթիայի բաժնի կողմից հետախուզվում էր գողության եւ գողության փորձի մեղադրանքներով:

Ոստիկանության Մարտունու բաժնի ՔՔԲ ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 16-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Ձվաթրեց» օդանավակայանի ժամանման սրահից բերման է ենթարկվել 35-ամյա Արտակ Մ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 265-րդ հոդվածի (Դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

